Դժուար է հասկանալ այդպիսի առաջարկութեան արժանաւորութիւնները։ Ամենից առաջ դժուար է երևակայել, թէ նոր կօնֆերենցիան ինչով պէտք է գրաւիչ կօնֆերենցիային կը մասնակցեն վեց պետութիւնների ներկայացուցիչները, որոնք արդէն մի անգամ վճիռ են կայացրել Ցուն Նասանի ներկայացուցիչը, որ համաձայնել է պետութիւնների նախկին վճռի հետ և թիւրքիայի ներկայացուցիչները, որ չեն համաձայնուում տալ Ցունասանին գրաւել նրան վիճակված երկիրը։ Այս պայմանները ի նկատի առնելով՝ նոր կօնֆերենցիայի ենթի անդամները ձայն կը տան յօգուտ Բերլինի կօնֆերենցիայի վճռի, իսկ ամէն նրա դէմ։ Ուրեմն այդ նոր առաջարկութենից թիւրքիան ինչ օգուտ կունենայ։ Ի՞նչն է նրան տալիս յուսալու, որ նոր կօնֆերենցիան կը տախտ Ցունասանին չափաւորել իր պահանջները։

Վերջապէս ի՞նչ ապահովութիւն կայ, որ նոր կօնֆերենցիայի վճիռները կիրագործուին։ Նիհատպէք, որ եւրոպական մանաւանդ ժողովը սահմանագիծը անցկացնելու ժամանակ արգելքների չի հանդիպիլ։ Այս դէպքում սահմանագիծը կոթշվի, բայց այնուամենայնիւ Ցունասանը միջոց չի ունենայ գրաւել իրան առած երկիրները։ Դուլցինիօի օրինակը ապացուցից, որ Բ. Դուռը մինչև անգամ առանց իր զօրքերի օգնութեանը դիմելու կարող է արգելել Ցունասանին, որ նա գրաւի իրան վիճակված նահանգները։

Դժուար չէ ուրիշ հասկանալ, որ Բ. Դրան նոր առաջարկութիւնը դիպլոմատիական մի խորամանկութիւն է։ Թիւրքայ կառավարութիւնը կամենում է յետաձգել միջնորդ դատարանի կայանալը։ Բ. Դուռը յոյս ունի, որ նոր բանակցութիւններ կբսկսվեն, որոնք գործը կերկարացնեն։ Ցունասանի հետ գործ ունենալով, թիւրքայ կառավարութիւնը կարող է յուսալ, որ եթէ գործը երկարի, Ցունասանի ֆինանսական միջոցները այնպէս կը վատանան, որ նա անկարող կը լինի պատերազմ բսկսել և այն ժամանակ թիւրքիան կարող է իր ցանկացած պիջումները միայն անել։

Մեծ անհանգստութիւն կը լիներ թղթատու, որ այդ խորամանկութիւնը կատարվիր։ Եւրոպան համոզված է, որ յոյն-թիւրքական հարցը կարելի է միայն միջնորդ դատարանի օգնութեամբ լուծել։ Գուցէ այդ միջոցը անաջողութեամբ է ընտրված, բայց քանի որ մի անգամ որոշված է, այլ ևս պէտք չէ յետ կանգնել։ Ցունասանը չէ կարող ապասել և նրա համար մեծ նշանակութիւն ունի իւրաքանչիւր շաբաթը, որովհետև յունական զօրքերը հետաքաշված են և նրանց համար մեծ ծախսեր են անվում։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻ

—

Ալեչկեր, նոյեմբերի 14

Առաջին թղթովս գուժեցի ձեզ հայ աղջկայ բռնաբարումն երկու քրոջ կողմից. մի յուսաք, թէ սա տարբեր մի երևութով պիտի ներկայանայ ձեզ և ամենը ընթերցողացդ. սա ալ գրեթէ նոյնն է ինչ որ էր իր նախորդն, այսինքն մի խժդժական իրողութիւն։ Ամսաթուէս 5 օր առաջ Հողաբերդի գայմագամ Մուստաֆա էֆէնդի Խաստուր ըսուած հայաբնակ գիւղը երթալ կուզէ, և իրմէ առաջ ոստիկան մը կը իրկէ գիւղ գալն ծանուցանելու, բայց հն գանուող էմլաքի (կալուածոց) երկու տաճիկ պաշտօնատարներ կը գրեն իրեն (գայմագամին), թէ գիւղին մէջ սենեակ չի կայ իր ոստիճանին յարմար և վայելուչ, և թէ իրենք արդէն գիւղացւոց հետ ընդ միասի կարգադրելու վրայ են հողային և կալուածական գործերն և կազմեն գալն երկու օր յետաձգել. գայմագամն կընդունի գայս, սակայն գիւղերը ժամ 2-ի միջոցներն (ըստ Թըրքաց) չը գիտեմ ծր սառանան կը դրէ գինք եղլել ու գիւղ գալ յանկարծակի և սենեակ պատհանդել անպատրաստ գիւղացիներէն՝ որք սենեակ չունենալով կը չուարճն կը մնան. գայմագամն զայրանալով սենեակ պատրաստելու հարար գինքն սպասեցնելուն, կը սկսի Գէորգ Քիւհան սաստիկ գանգատիլ և գանգատիլ տալ, մինչ դի վիրաւոր կը փռուի գետին, իսկ իր բարի և հաւատարիմ դրացիներէն պ. Յովսէփ Նահապետեան երբ կը մօտէ իր դրացւոյն ազատութեան և միջնորդ կըլլայ ազատելու. «Ա՛ի, կեսվուբլար, սէլ ազմըշղրնըդ, սիզին ֆիլբրինդ պաչկա դրը, կիւվէնէնկինդ վար էվ, եաթըրըն չոբ կիսպուրաս կրսվ, գայմագամն և կը տրամայէ իր մարդոց, որք գազանական վայրենութեամբ կը թափին խեղճ Յովսէփի վրայ և նորա զօրաւոր դիմադրութեան վրայ առաւել կատաղելով ականջներէն կը խածնեն ու կը ձգեն գետին։

Թիւրք սոսկալի կը պատմեն այս գազանական տեսարանն, ուր կանայք ու տղայք կը լան ու կաղաղակեն իրենց գիւղի մեծաւորի ազատութեան համար, սակայն գայմագամի սպասաւորք սուր բանալով կը յարձակին նոցա վրայ։

Գանգատեալներն բաւական ծանր կերպով վիրաւորուած են, այնպէս որ տգիւ վեց անձն կը բուժի նոցա վերքերն, զի լուծքի փայտերով և տասը բեկերով են ծեծուած. մարմիններն բոլորովին կապուտցած է։

Ալ գիտէք է ձեզ գուշակել, թէ ինչեր չեն պատահեր և քրիստ կողմէն, երբ մի պաշտօնական մարդ, որ իր ափի մէջ պիտի վարէ ժողովրդեան անդորրութիւնն և հանգստութիւն, մի վայրագ և ապերասան գործով լռելեայն կը քաշալերէ գիւրսն, երբ տեսնեն գայս քաղքեր, որք արդէն փաթցած են կարի՝ շէչխի արշաւանաք, առաւել պիտի սրտապնդին բարդելու չարիս ի վերայ չարեաց, տասնապատիկ հատատալով, թէ գիւղ Պարսկաստանի յաղթելէ վերջ անչուշտ այս կողմեր պիտի վերադառնայ ձմռանելու և զիրենք պաշտպանելու ոտահայոց կարծեցեալ արշաւանքէն։

Խալաճ առհասարակ սկսած են խնթիլ և մախանաք նայել հայոց վրայ, որք արդարև, թուրախրտ չեն անչափ, բայց անզէն, անհաց, անդրամ, և անասնասպառ են. և այս բոլոր չըզոյս էմլաքիք մնալով այս յարմար և պատեհական երկրի ժողովրդեան վրայ, թուլասիրտ երեւելու չափ վտանգուցած են գիրենք։

Կառավարութիւնը ամենայն խստութեամբ տուրքերը կը հատաքէ առանց խնայելու տալիք ժողովրդէն, որոյ վրայ հարկ էր տանել խնամ հայրագործով, սակայն ով չի գիտեր թէ թրքին մէկէն, որ այդ գիւղացիներին թոյլ չը տան խանին մտնելու։ Մի երկրում, ուր ամէն գատ կատարվում էր բերանացի, կամայական կերպով, ուր դատաւորը մտքերի չէր անկին, ուր ամէն գործ քննվում էր լոկ խօսքերով միայն,—այսպիսի հանգամանքներում դրանիների բարեխոսութիւնը կամ նրանց չարախոսութիւնը, ի հարկէ, մեծ նշանակութիւն կարող էր ունենալ գանգատատուների վերաբերութեամբ։ Դրանիները կարող էին դէպի ամէն կողմ ծռել գատաւորի կամքը, որը մի և նոյն ժամանակ ժողովրդի տէրն էր։ Դրանիները կարող էին գործը այնպէս տարբել, որ իշխանը ամենևին տեղեկութիւն չը ստանար, թէ ինչ է կատարվում ժողովրդի մէջ։ Չափազանց անկարգութիւնները կառավարութեան մէջ, մինչ նենգում են ծայրագոյն միջոցներ նրանց բռանալու համար, այն է ոչնչացնել անիրաւ իշխանութիւնը արդարութիւնը վերականգնելու համար։ Բայց դրա համար ժողովրդի մէջ բաւական կեանք և բարոյական ուժ է հարկաւոր։ Այդ ժամանակներում (և մինչև այսօր Պարսկաստանի մէջ), ժողովուրդը այն աստիճան մեռած էր, որ սովորական իրերի կարգն էր անցել այն զըրոյցը, թէ հարիր կը գցեմ բօղազս, կը գնամ իմանի դրանը, լինձ կպրեմ... Դա տարատարած վիրացուց վերջին յուսահատական խօսքն էր, երբ կանհնում էր, որ իր ցաւերի վրա ուշադրութիւն դարձնէին։ Լուկրեցիան խնդրը ցցելով իր կուրծքի մէջ, անձնասպան եղաւ և իր մահուամբ բողոքեց անբարոյական Հռոմի դէմ։ Իսկ հայ գիւղացին մահմեդական իշխանի դրանը իրան պրելով, բողոքում էր տիրոջ բռնութեան դէմ։

(Կը շարունակվի)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳՐԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆԻ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 դեկտեմբերի։ Երէկ Թագաւոր կայսրը ընդունեց յայտնի ճանապարհորդ Նօրդենշելդին։ „Новое Время“ հաղորդում է. տարաձված լուրերը Լոմ կասեան փոխարքայութենից երկու գլխաւոր հնահանգապետութիւն կազմելու մասին տարածում են։

ԼՕՆԴՈՆ, 24 դեկտեմբերի։ Երէկ կառավարութիւնը նիստ ունեցաւ իրլանդական գործերի վերաբերութեամբ, որին մասնակցեցին բոլոր մինիստրները։

ԿԱՊՇՏԱՏ, 24 դեկտեմբերի։ Բօերների գինուորված խումբերը մնան Նատալ, որպէս զի խանգարեն անգլիական զօրքերի շարժմանը։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ